ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1486-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԱՀԻՏ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ , ՎԱՐԴԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ԱՎԵԼ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը , Վարդան Սերյոժայի Վարդանյանի 01.10.2024թ. թիվ 5500 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վարդան Սերյոժայի Վարդանյանին /ծնվ 21/07/1975թ/,Սուսաննա Սերյոժայի Վարդանյանին /ծնվ 11/07/1968թ/ և Անահիտ Գառնիկի Ավետիսյանին / ծնվ 03/01/1948 թ/ պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Հացիկ, 04-058-0033-0012 կադաստրային ծածկագրով 583,0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 3,0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:

2. Վարդան Սերյոժայի Վարդանյանին ,Սուսաննա Սերյոժայի Վարդանյանին և Անահիտ Գառնիկի Ավետիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Հացիկ , 16-րդ փողոց, 46/2 հողամաս:

3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց և

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024 թ. դեկտեմբերի 03
ք. Արմավիր